ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անկախ Պետությունների Համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին

Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գործելով «Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին» 1991 թվականի դեկտեմբերի 8-ի համաձայնագրին համապատասխան,

նշելով, որ հումանիտար ոլորտում համագործակցության խրախուսումը և հետագա զարգացումը բխում են Կողմերի ընդհանուր շահերից,

ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական տարածության ձևավորման բնագավառում համագործակցության մասին» 1997 թվականի հունվարի 17-ի համաձայնագրի դրույթներով,

հաշվի առնելով ԱՊՀ-ի տարածքում բարձրագույն կրթության կրթական ծրագրերի, գիտական և գիտատեխնիկական նախագծերի համատեղ իրագործման հաջողված փորձը,

արտահայտելով սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կրթական կազմակերպությունների (հաստատությունների) (այսուհետ՝ կրթական կազմակերպություններ) ռեսուրսների օգտագործմամբ համատեղ բարձրագույն կրթության, լրացուցիչ մասնագիտական ծրագրերի/լրացուցիչ կրթության կրթական ծրագրերի (այսուհետ՝ համատեղ կրթական ծրագրեր) իրագործման ցանցային ձևի ներդրման միջոցով կադրերի պատրաստման որակը բարձրացնելու համատեղ ձգտում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը հիմնադրում են ԱՊՀ ցանցային համալսարան (այսուհետ՝ ԱՊՀ ՑՀ)՝ բարձրագույն կրթության, լրացուցիչ մասնագիտական ծրագրերի/լրացուցիչ կրթության կրթական ծրագրերի մասնագիտությունների և (կամ) պատրաստման ուղղությունների գծով կադրերի պատրաստման, համատեղ գիտական ու գիտատեխնիկական նախագծերի իրագործման համար, որոնք առաջնահերթ նշանակություն ունեն սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսական և սոցիալական զարգացման գործում:

Հոդված 2

ԱՊՀ ՑՀ-ն սույն Համաձայնագրի մասնակից պետությունների բարձրագույն կրթության այն կրթական կազմակերպությունների (այսուհետ՝ գործընկեր կազմակերպություններ) ցանցն է, որոնք միավորվել են սույն Համաձայնագրի նպատակների և բարձրագույն կրթության և լրացուցիչ մասնագիտական կրթության համատեղ կրթական ծրագրերի (այսուհետ՝ համատեղ կրթական ծրագրեր) իրագործման համար գործընկեր կազմակերպությունների ռեսուրսների օգտագործմամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համատեղ կրթական ծրագրերով նախատեսվող՝ ուսուցում իրականացնելու, ուսումնական և արտադրական պրակտիկաներ և ուսումնական գործունեության այլ տեսակներ անցկացնելու համար ռեսուրսներ ունեցող՝ ԱՊՀ մասնակից պետությունների այլ կազմակերպությունների և հաստատությունների մասնակցությամբ:

Գործընկեր կազմակերպություններ են համարվում ԱՊՀ ՑՀ-ին կրթական կազմակերպությունների միանալու չափորոշիչներին և պայմաններին համապատասխանող կրթական կազմակերպությունները:

ԱՊՀ ՑՀ-ի գործունեությունը կանոնակարգվում է սույն Համաձայնագրով, սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով՝ սույն Համաձայնագրի մասնակիցների կողմից:

Հոդված 3

ԱՊՀ ՑՀ-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝

գործընկեր կազմակերպությունների բազայի հիման վրա կրթական գործունեության իրականացումը՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների սովորող քաղաքացիների ակադեմիական շարժունության հիման վրա.

ԱՊՀ ՑՀ-ի փոխհամաձայնեցված մասնագիտությունների և (կամ) պատրաստման դասընթացների ուղղությունների մասով համատեղ կրթական ծրագրերի ձևավորումը.

նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրումը համատեղ կրթական ծրագրերով ուսուցման գործընթացում.

ԱՊՀ ՑՀ-ի շրջանակներում համատեղ գիտական և գիտատեխնիկական նախագծերի իրագործումը.

աջակցությունը սույն Համաձայնագրի մասնակից պետություններում ապրող ազգերի լեզուների, մշակույթների և ավանդույթների ուսումնասիրմանը.

ԱՊՀ ՑՀ-ի գործունեության՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը չհակասող այլ ուղղություններ:

Հոդված 4

Ապահովվում է ԱՊՀ ՑՀ-ի կողմից տրամադրվող կրթական ծառայություններին սույն Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների հավասար հասանելիություն՝ անկախ ազգությունից, սեռից, տարիքից, դավանանքից, ռասայից, լեզվից, ծագումից, բնակության վայրից, առողջական վիճակից, սոցիալական և գույքային դրությունից:

Գործընկեր կազմակերպություններում ուսուցման համար սույն Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների ընդունելությունը և գործընկեր կազմակերպություններում նրանց ուսուցումը համատեղ կրթական ծրագրերի շրջանակներում կատարվում են սույն Համաձայնագրին, գործընկեր կազմակերպության գտնվելու վայրի պետության (այսուհետ՝ ընդունող պետություն) օրենսդրությանը և գործընկեր կազմակերպությունների միջև այն պայմանագրին համապատասխան, որում նշվում են՝

համատեղ կրթական ծրագրի տեսակը, մակարդակը և (կամ) ուղղվածությունը (որոշակի մակարդակի, տեսակի և (կամ) ուղղվածության՝ համատեղ կրթական ծրագրի մասերը).

սովորողների կարգավիճակը, համատեղ կրթական ծրագրով ուսուցման ընդունելության կանոնները, սովորողների ակադեմիական շարժունությունը կազմակերպելու կարգը.

համատեղ կրթական ծրագրով կրթական գործունեություն իրականացնելու պայմանները և կարգը, այդ թվում՝ գործընկեր կազմակերպությունների միջև պարտավորությունների բաշխումը, համատեղ կրթական ծրագրի իրագործման կարգը, յուրաքանչյուր գործընկեր կազմակերպության կողմից օգտագործվող ռեսուրսների բնույթն ու ծավալը.

կրթության և (կամ) որակավորման մասին վկայող՝ տրվող փաստաթուղթը կամ փաստաթղթերը, ինչպես նաև այն գործընկեր կազմակերպությունները, որոնց կողմից տրվում են նշված փաստաթղթերը.

գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի գործողության

ժամկետը, դրա փոփոխման և գործողության դադարեցման կարգը:

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների ուսուցումը գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի շրջանակներում իրականացվում է՝

սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային բյուջեներով կրթության զարգացման համար նախատեսված հատկացումների հաշվին՝ նշված անձանց վճարելով կրթաթոշակներ և գործընկեր կազմակերպությունների հանրակացարաններում նրանց տրամադրելով բնակելի տարածքներ՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների բյուջեներով նախատեսված հատկացումների հաշվին սովորող քաղաքացիների համար ընդունող պետությունների օրենսդրությամբ սահմանված պայմաններով.

ֆիզիկական և իրավաբանական անձանց միջոցների հաշվին՝ վճարովի կրթական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրին համապատասխան.

ԱՊՀ մասնակից պետությունների կողմից ստեղծված հիմնադրամների հատկացումների հաշվին.

ֆինանսավորման այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին, որոնց գործունեությունը չի հակասում ընդունող պետությունների օրենսդրությանը:

Գործընկեր կազմակերպություններում համատեղ կրթական ծրագրերի ուսուցումն իրականացվում է ռուսերենով:

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության և գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ ԱՊՀ ՑՀ-ի շրջանավարտներն ստանում են կրթության մասին և (կամ) այն գործընկեր կազմակերպությունների կողմից տրված որակավորման մասին վկայող փաստաթղթեր, որոնցում ԱՊՀ ՑՀ-ի շրջանավարտներն անցել են ուսուցումը:

ԱՊՀ ՑՀ-ի գիտամանկավարժական աշխատողներին և սովորողներին տրամադրվում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներն ու ազատությունները:

Հոդված 5

ԱՊՀ ՑՀ-ի գործունեության ապահովման համար ստեղծվում է ԱՊՀ ՑՀ-ի համակարգման խորհուրդ (այսուհետ՝ ԱՊՀ ՑՀ ՀԽ), և սահմանվում է ԱՊՀ ՑՀ-ի

գլխամասային կազմակերպություն:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ն համարվում է ԱՊՀ ՑՀ-ի կառավարման կոլեգիալ մարմինը:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի կազմում սույն Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության իշխանության մարմնից ներգրավվում է որոշումներ կայացնելու լիազորություն ունեցող մեկ ներկայացուցիչ, որն իրականացնում է կրթության ոլորտում պետական քաղաքականության մշակման և նորմատիվ իրավական կարգավորման գործառույթներ (որպես կանոն՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի մակարդակով), և յուրաքանչյուր գործընկեր կազմակերպությունից մեկ ներկայացուցիչ (որպես կանոն՝ ղեկավար):

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ն՝

մշակում և հաստատում է իր աշխատանքի կանոնակարգը, որով սահմանվում են ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի կողմից որոշումների կայացման ձևը, կարգը, և որով կարգավորվում են ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի գործունեության կազմակերպմանն առնչվող այլ հարցեր.

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի կանոնակարգով սահմանված կարգով գործընկեր կազմակերպությունների թվից նշանակում է ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպություն.

հաստատում է ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպության կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա կազմված՝ ԱՊՀ ՑՀ-ի աշխատանքի տարեկան և հեռանկարային պլանները.

մշակում և հաստատում է ԱՊՀ ՑՀ-ին կրթական կազմակերպությունների միանալու չափորոշիչները և պայմանները.

որոշումներ է կայացնում ԱՊՀ ՑՀ-ի կազմում կրթական կազմակերպությունների ներգրավման մասին.

լսում է ԱՊՀ ՑՀ-ի գործունեության մասին ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպության տարեկան հաշվետվությունները.

ըստ անհրաժեշտության՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների իշխանության շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների՝ կրթության բնագավառում համագործակցության հարցերով խորհրդին տեղեկատվություն է տրամադրում ԱՊՀ ՑՀ-ի գործունեության մասին:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ն հրավիրվում է ըստ անհրաժեշտության, սակայն առնվազն տարին մեկ անգամ: ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի նիստը համարվում է իրավազոր, եթե ներկա է ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի անդամների առնվազն կեսը:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ն գլխավորում է նախագահը, որն ընտրվում է ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի կանոնակարգով սահմանված կարգով:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի պատասխանատու քարտուղարը նշանակվում է ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպության հաստիքային աշխատակիցների կազմից՝ ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի կանոնակարգով սահմանված կարգով:

ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպությունը գործում է ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում՝ ԱՊՀ ՑՀ գործընկեր կազմակերպությունների համատեղ գործունեությունը համակարգելու նպատակներով:

Հոդված 6

Գործընկեր կազմակերպությունների ուսումնամեթոդական, վարչատնտեսական և կազմակերպչական գործունեության ֆինանսավորումը կատարվում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության համապատասխան գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի հիման վրա, այդ թվում՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից միջոցների ներգրավմամբ:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի անդամների, ԱՊՀ ՑՀ-ի գործընկեր կազմակերպությունների և գլխամասային կազմակերպության ներկայացուցիչների՝ ԱՊՀ ՑՀ-ի միջոցառումներին մասնակցելու մասով գործուղման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են գործադիր իշխանության ուղարկող մարմինների և ԱՊՀ մասնակից պետությունների կազմակերպությունների կողմից:

ԱՊՀ ՑՀ ՀԽ-ի, ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպության նիստերի անցկացման ֆինանսավորման հետ կապված ծախսերը կարող են կատարվել կրթության ոլորտում պետական քաղաքականության և նորմատիվ իրավական կարգավորման գործառույթ իրականացնող՝ իշխանության մարմինների և սույն Համաձայնագրի այն մասնակից պետությունների կազմակերպությունների հաշվին, որոնց տարածքներում անցկացվում են նշված նիստերը:

ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպության գործունեության ֆինանսավորումը կատարվում է ԱՊՀ ՑՀ-ի գլխամասային կազմակերպության միջոցների հաշվին:

Հոդված 7

Սույն Համաձայնագրում չեն շոշափվում Կողմերից յուրաքանչյուրի այն միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակից է այդ Կողմի պետությունը:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը կազմող փոփոխություններ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ժամանակ Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրը բաց է ԱՊՀ մասնակից ցանկացած պետության միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Սույն Համաձայնագիրը միացող պետության համար ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ ոչ ուշ, քան դուրս գալու օրվանից վեց ամիս առաջ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում

ուղարկելով ավանդապահին և կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

Հոդված 13

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում դրա դրույթներն իրագործման փուլում գտնվող ծրագրերի և նախագծերի համար ուժի մեջ են մնում մինչև դրանց կատարման ավարտը:

Կատարված է 2020 թվականի մայիսի 29-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

Ադրբեջանի Հանրապետության Կառավարության կողմից

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից

Տաջիկստանի Հանրապետության Կառավարության կողմից

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից

Թուրքմենստանի Կառավարության կողմից

Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից

Ուզբեկստանի Հանրապետության Կառավարության կողմից

Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից

Ուկրաինայի Կառավարության կողմից

Մոլդովայի Հանրապետության Կառավարության կողմից

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020 թվականի մայիսի 29-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն